
Պարթենիոս Աթենացու Պաղեստինի Կեսարիայի մետրոպոլիտի Պատմությունն հունաց և հայոց տարածայնության: Հունարեն բնագրի թարգմանությունը, առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Հրաչ Մ. Բարթիկյանի: Մետրոպ արք. Աշճեան մատենաշար: Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2008, 170 էջ:

Աշխատությունը ներկայացնում է հույն-հայ հարաբերությունների մի դրվագը (XVIII դ. 30-ական թվականներ) Երուսաղեմում հույների և հայերի՝ Ս. Տեղյաց համար դարերի խորքից եկող վեճերի ու ընդհարումների վերաբերյալ. առավել որոշակի, որ և Պարթենիոսի պատմության առանցքն է՝ հունական կողմի դիրքորոշումն ու դրա արդարացիության հիմնավորումը:

Պարթենիոսն ըստ ամենայնի շարադրում է հույների հավակնությունները և դրանց իրականացմանը հետամուտ նրանց արարքները ու հենց այս հանգամանքի շնորհիվ նրա գործը ստանում է շատ կարևոր սկզբնաղբյուրի նշանակություն: Հիրավի, առաջին անգամ Ս. Տեղյաց շուրջ դարավոր բանավեճը քննարկելիս հայ ուսումնասիրողը հնարավորություն է ստանում ի մոտո ծանոթանալու հունական տեսակետին: Կարծում ենք, որ այդպիսի ծանոթությունը նաև հնարավորություն կընձեռնի առավել լայնախոհ մոտեցում ցուցաբերել Ս. Տեղյաց համար հույն-հայկական հնամենի բախումներին՝ հաղթահարելով միայն հայկական աղբյուրների մեջ դեգերելու շրջանակը, դրան համադրելու Պարթենիոսի գործը: Վերջինս գալիս է լրացնելու մի կարևոր ընդհանրություն, որ այն ունի հայկական աղբյուրների հետ. և՛ հայերը, և՛ հույները բացարձակապես անվերապահ են իրենց սեփական ճշմարտացիության մեջ, ճիշտ նույնքան անվերապահ, երբ նրանցից յուրաքանչյուրը պաշտպանում է իր դավանական անադարտությունը: Այնուհետև, և՛ հույները, և՛ հայերը իրենց ճշմարտացիությունը հիմնավորում են հնավանդ առասպելախառն պատմություններով: Պարթենիոսը խնդրի

պատմությունը, փաստորեն, շարադրում է 637 թվականից, Երուսաղեմը գրաված Օմար խալիֆայի ժամանակներից, որին, իբր, երազ տեսնելուց հետո այցելել է Երուսաղեմի պատրիարք Սուփրոնիոսը և նրան հանձնել քաղաքի բանալիները: Եվ ի պատասխան դրա, Օմարը հույներին շնորհել է հրովարտակ նրանց պատրիարքի ենթակայությանը հանձնելով հաբեշների, ֆրանկների, դպտիների, ասորիների, հայերի, հակոբիկների, նեստորականների և մարոնիների համայնքները: Հայերն իրենց հերթին վկայակոչում էին հնավանդ վճիռները հոգուտ իրենց, պնդելով, որ դրանք ամրագրում են Սուրբ քաղաքում հաբեշների, դպտիների և ասորիների ենթակայությունը Ս. Հակոբյանց վանքում հաստատված հայոց պատրիարքին: Պարթենիոսի շարադրանքից հստակ երևում է, որ խնդիրը ոչ թե սոսկ հիշյալ համայնքների ենթակայությանն էր վերաբերում, այլ նրանց ունեցվածքը Ս. Տեղյաց տարածքում տնօրինելուն:

Հայերի և հույների մյուս ընդհանրությունը միմյանց մեղադրելն էր պատմական փաստաթղթերը (որպիսիք վկայում էին նրանց իրավունքները Ս. Տեղյաց ուխտատեղերի ու կալվածքների նկատմամբ) կեղծելու և կաշառատվության մեջ: Պարթենիոսը հույներին ներկայացնում է որպես աղքատ մի համայնք և հեճեճում է դրամի պակասից. նպատակը պարզ է՝ իրենց կողմը առաքինի է մնում թեկուզ և այն պատճառով, որ աղքատ են ու եթե անգամ ցանկանան էլ, չեն կարող կաշառել օսմանյան պաշտոնյաներին: Հայկական վավերագրերն իրենց հերթին պնդում են, որ Երուսաղեմում հույները գրեթե միշտ հաջողության են հասել ամենագոր կաշառքի

շնորհիվ: Իր առաջաբանում Հ. Բարթիկյանը իրավացիորեն նկատում է, որ օսմանյան պաշտոնեությունը կրկնակի օգուտ էր քաղում դրանից՝ կաշառք առնելով երկու կողմից էլ և ապա նրանց լարելով իրար դեմ: Ավելացնենք, որ օսմանյան պետությունը քրիստոնյա երկու ազգերին միմյանց դեմ էր գրգռում նաև բորբոքելով դավանական թշնամանքը նրանց միջև՝ սկսած Մեհմեդ Բ-ի ժամանակներից, երբ հայերին էր հանձնում Կ. Պոլսի կամ անվթար մնացած և կամ էլ ավերակված հունական եկեղեցիները:

Պարթենիոսը ձգտում է ամեն կերպ հիմնավորել հույների իրավունքները Ս. Տեղյաց վիճելի տարածքների նկատմամբ: Դրան հասնելու համար նա խնդիրն այնպես պետք է ներկայացնեք, որ ասորիները, դպտիները, հաբեշները և հայերը ի սկզբանե ավանդույթի ուժով ենթակա են եղել իրենց՝ հույներին, ուրեմն և վերջիններս են տնօրինել նշված տարածքները: Այս սևեռուն գաղափարը հաստատելու համար Պարթենիոսը դիմում է նպատակասլաց ոճի: Նա վկայակոչում է պատմականորեն գոյություն ունեցող և չունեցող փաստեր, դիզում իրար վրա և ուղղում հայերի դեմ: Մյուս կողմից, հիմնավորելով ուղղափառ եկեղեցու դավանական անադարտությունը, Պարթենիոսն անդրադառնում է նախորդ՝ XVII դ. բորբոքված հույն-հայկական դավանական բախումների մի այնպիսի առիթի, ինչպիսին ծոպատիկն էր: Ուղղափառ և Առաքելական հայ եկեղեցիները Ձատիկը նշում էին տարբեր օրերի (տոմարական տարբերություններից ելնելով), որ և լուրջ ընդհարումների պատճառ էր դառնում Սուրբ քաղաքում: Երուսաղեմում, սակայն, փոշտոցի ձայնը դրամատիկ, հաճախ ողբերգական ցնցումներ էր պատճառում Կ. Պոլսում և ապա կայսրության մյուս վայրերում, որտեղ հայերն ու հույներն ապրում էին կողք կողքի: Պարթենիոսն անդրադառնում է 1634 թ. ծոպատիկի դեպքերին, երբ կողմերի ընդհարումներին միջամտել էր օսմանյան կառավարությունը և որպես հրահրիչի մահապատժի ենթարկել հայերից Մինաս քահանային և ալաճաճի (ներկարար) Սեֆերին:

Մինչդեռ, Պարթենիոսն այս ամենի պատճառը վերագրում է նրան, որ հայերը կեղծել են հույների օգտին վկայող փաստաթղթերը, և որի համար, իբր, նրանցից շատերը մահվան դատապարտվեցին: Ուշագրավ է, որ այսպիսի դաժան միջամտություններից հետո դաս էին առել և՛ հայ, և՛ հույն կրոնական ու աշխարհիկ վերնախավերը: Պարթենիոսի գործում գտնում ենք դրա վկայությունը. 1734 թ. սուլթանի կողմից հայերի օգտին տրված ֆերմանը ո՛չ - հույն, և ո՛չ էլ հայ գլխավորները չեն ցանկանում հրապարակել՝ յուրայինների, ինչպես և արաբ ամբոխի հուզումներին տեղիք չտալու համար:

Հասկանալի է Պարթենիոսի աստելությունը հայ բոլոր գործիչների՝ Պարոնտերի, Հովհաննես Կոլոտ պատրիարքի, Հակոբ Նալյանի, մեծահարուստ Սեդրոսի և այլոց նկատմամբ: Ընդամին, որքան եռանդուն և աչքի ընկնող է հակառակ կողմի գործիչը, այնքան ավելի շռայլ է Պարթենիոսը նրան ճշմարտության հակոտնյա պատկերելիս: Անգամ հույն-հայկական փոխադարձ համաձայնությունները վիճելի տարածքների հարցում նա համարում է հայերի ընչաքաղցության և հույների իրավունքները յուրացնելու արդյունք: Մակայն նրա շարադրանքում ճանաչողական արժեք ունի ոչ թե հայ պատմական գործիչների բացասական թանձր նկարագիրը, այլ իրադարձությունների մեջ նրանց մասնակցության և ունեցած տեղի պատկերումը: Ճիշտ այնպես, ինչպես արժեքավոր են հույն-հայկական դավանական հակամարտությունների հանդեպ օսմանյան իշխանությունների բեկբեկուն վերաբերմունքի բացահայտումները, որ այնքան հանգամանորեն և շարահարված ներկայացնում է Պարթենիոսը: Մակայն նրա համար առավել կարևորը հույների իրավունքների հիմնավորվածությունն է, որ պետք էր ցույց տալ օսմանյան այս միջավայրից բարձր կանգնած, արտաքո կարգի առաքինի և հույժ անկողմնակալ մեկի միջոցով: Եվ այստեղ է, որ հանդես է գալիս նրա շարադրանքի կենտրոնական դեմքը՝ մեծ վեզիրի «էկոնոմ» Խալիսսան, հեղինակի բնութագրմամբ՝ «համայն պաշտոնեության մեջ իր

իմաստուն և գիտուն արարքներով փայլող, ամեն տեսակի առաքինություններով օժտված» (էջ 66–67): Հույների հաջողությունները Պարթենիոսը հիմնականում կապակցում է այս անձնավորության գործողությունների հետ:

Իր սնեռուն գաղափարից ելնելով՝ Պարթենիոսը հաշվի չի նստում նույնիսկ պատմական փաստերի հետ: Նա (ինչպես և հայերն ըստ ամենայնի) հիանալի գիտի, որ օսմանների համար կարևորը նախադեպի նորմն է, որ պետք էր ստեղծել անգամ փաստագուրկ հիմքի վրա: Ուստի և հայտնում է, որ Երուսաղեմում այլ դավանանքների նկատմամբ հույների գերակայությունը վավերացրել է նաև Մեհմեդ Բ-ը, թեև իրեն՝ հեղինակին քաջ հայտնի է, որ Երուսաղեմը թուրքերը գրավել են Սելիմ Ա-ի (1512–1520) ժամանակ և որ Մեհմեդը որևէ առնչություն չէր կարող ունենալ Երուսաղեմում որևէ դավանանքի հավակնությունների հետ:

Պարթենիոսը գործի է դնում նաև անսպասելի զենքեր: Երուսաղեմում հայերի իրավասությունները ժխտելիս, նա կասկածի է ենթարկում տեղի հայկական միաբանության «պատրիարք» պատվանունը: Հայերը, գրում է նա, «ինչպես ու թե մեզանից առաջ են: Երբևից նրանք իրադրության և կալվածքների տեր դարձան: Որտեղից հաղորդակից դարձան և նույն ինքն «պատրիարք» անվանը: Թագավորի կողմից այդ կոչումը տրվում է իրենց ենթակա ցեղակիցներ ունեցողներին այն վայրերում, որում պատրիարքության պաշտոն են վարում: Նրանք ցույց են տվել Երուսաղեմում կամ որևէ այլ արաբական գյուղում մի տեղացու, ով նրանց կրոնն է դավանում, կամ դրանից էլ հրաժարվենք, թող մեզ ասեն այս «պատրիարքը» ինչ է նշանակում և ո՞ր լեզվի բառ է» (էջ 86–87): Պարթենիոսն անգիտանում է Երուսաղեմում հայ համայնքի գոյությունը, բայց այստեղ դա չէ կարևորը, այլ այն, որ նա ժխտում է ասորիների, հաբեշների և դպտիների՝ հայերին համադավան լինելու իրողությունը: Ժխտելով Երուսաղեմի հայոց պատրիարքի տիտղոսը՝ Պարթենիոսը ժխտում էր նաև նրա կարգավիճակն ու

դրանից բխող նրա իրավասությունները: Ուշագրավ է, որ «պատրիարք» հասկացությանը գրեթե նույն բացատրությունն էր տալիս մի քանի տասնամյակ անց Միմեոն Երևանցի կաթողիկոսը՝ այս անգամ նկատի առնելով Կ.Պոլսի պատրիարքներին: «Ոմանք փառասէրք այնտամոլ սեւագլուխք յանգլիսութենէ ազգիս զժամ գտանելով զինքեանս պատրիարքս անուանեցին... գորս և գռեհիկ հասարակութիւնն ազգիս մերոյ անընտրողաբար սովորութիւն արարեալ կոչեցին եւ կոչէն: Այդպէս է եւ ի Կոստանդնուպոլիս, որ ոչ է երկիր եւ քաղաք հայոց, այլ յունաց, յորում նստիր յունաց պատրիարքն որպէս եւ արդէն իսկ նստի»¹: Իրականում սխալվում էին և՛ Պարթենիոսը, և՛ Միմեոնը: Երուսաղեմի հայոց հոգևոր պետը «պատրիարք» կարող էր կոչվել ոչ միայն համադավան միաբանությունների մեջ գերակայության ավանդական իրավունքների, այլև բուն Երուսաղեմում հայ համայնքի առկայության հիմնավորումով: Մինչդեռ, Պարթենիոսը ժխտում է, ու հանիրավի, և՛ մեկը, և՛ մյուսը: Գալով Միմեոն Երևանցու վերոհիշյալ առարկությանը, նկատենք, որ նա անտեսում է մի շատ կարևոր հանգամանք. Կ.Պոլսի հայ հոգևոր պետը «պատրիարք» կարող էր կոչվել հենց այն պատճառով, որ նա սոսկ օսմանյան մայրաքաղաքի հայերի հոգևոր առաջնորդը չէր, այլ, ինչպես ցույց են տալիս փաստերը, դեռևս Մեհմեդ Բ-ի ժամանակներից նրան էին ենթարկվում Բերայի, Պրուսայի ու Ֆիլիպեի առաջնորդությունները:

Պարթենիոսի շարադրանքում առկա է մի իրողություն, որ հատկանշական է օսմանյան ռազմաբյուրոկրատական կառույցների և դավանական հանրությունների (միլիթների) փոխհարաբերություններին: Հիրավի, կաշառքը՝ կաշառք, բայց դրա հետ միասին կար նաև ռենեգատների (իսլամացած դավանափոխներ) ուրվագծվող համակրանքը իրենց երբեմնի դավանակիցների կամ որ գրեթե նույնն է՝ ազգակիցների հանդեպ: Կրոնափոխ այլահա-

¹ Մ ի մ ե ո ն Եր եւ ա ն ց ի. Ջամբո, Վաղարշապատ, 1873, էջ 56:

վատներն իրենց կարիերան պարտադրաբար սկսում էին դեվժիրմեի (մանկահավաք) միջոցով, իսկ դեվժիրմեի ուժով թուրքերը հավաքում էին դեռահասներից մինչև 16 տարեկան և ավելի ավագ պատանիների ու հատկապես այս վերջինների մեջ կարող էր պահպանված լինել հիշողությունը իր ընտանիքի, դավանական հանրության և միջավայրի մասին: Ավելին, չէր բացառվում, որ դեվժիրմե ընդգրկված, ընտանիքից հեռացած և իսլամացած այլահավատը դրանից հետո ևս շարունակի կապեր պահպանել իր ընտանիքի կամ միջավայրի հետ: Պատահական չէ, որ և հաստատում է Պարթենիոսը, որ հույները հայերին սաստիկ նեղելով հաջողության էին հասել ազգով վրացի Բամայիլ փաշայի՝ իրենց երբեմնի դավանակցի կարճատև մեծ վեզիրության ժամանակ, երբ Երուսաղեմում հույների իրավունքները կեղծելու մեղադրանքով բանտ նետվեցին հայերի աշխարհիկ գլխավորներ Սեդրոսը և Մելիտոնը: Նրանք ազատվեցին նոր մեծ վեզիր Էսսեիդ Մեհմեդի իշխանության գլուխ գալով (1735 թ.): Այս փաստը գրեթե խոստովանում է Պարթենիոսը: Բամայիլ փաշայի պաշտոնակալությունը և Մեհմեդ փաշայի նշանակումը, գրում է նա, «մեզ տխրեցրեց, իսկ հայերին ուրախացրեց:

Մեր տխրելու պատճառն այն էր, որ մեր խնդիրն առաջ քաշողն ու տանողը Բամայիլ փաշան էր, իսկ հայերի ուրախությունն այն էր, որ հավատացած էին, որ արդարությունը չէր պաշտպանվում, այլ կուսակալը (մեծ վեզիրը – Ա. Խ.)» (էջ 147):

Էսսեիդ Մեհմեդի առաջին գործերից մեկը եղավ նոր բանբեր ուղակելը Երուսաղեմ՝ հույներին նպաստավոր հրամանագիրը չեղյալ հայտարարելու և հոգուտ հայերի հինը ուժի մեջ թողնելու պատվերով, հայտնում է Օրմանյանը²: Գ. Բամպուքճյանը գրում է, որ ըստ գրույցների, Էսսեիդ Մեհմեդը հայազգի էր³: Ավելորդ չէր լինի նշել նաև, որ ազգությամբ հայ էր հիշյալ

Սեդրոսի հովանավոր և, հավանաբար, նրա միջոցով հայերի հանդեպ բարյացակամ մեծ վեզիր Բբրահիմ Նևշեհիրլին: Վերջինս սպանվել է Պատրոնա Խալիլի ապստամբության ժամանակ, 1730 թ.:

Ասվածը և՛ հույների, և՛ հայերի դավանական կամ ազգային համակրանքների դեպքում ուներ պատահական բնույթ և դրանով չէ, որ որոշվում էին օսմանյան բարձր պաշտոնեության ու միլեթների փոխհարաբերությունները: Մեծ վեզիրները (կամ պակաս բարձրաստիճան պաշտոնյաները), անկախ այս ամենից, իրականացնում էին բռնության միջոցներով միլեթներին հնազանդության մեջ պահելու և նրանց իրավագրկությունը պահպանելու օսմանյան պետական քաղաքականությունը: Իսկ առանձին իրողությունները մնում էին սոսկ իբրև այդպիսիք, սակայն դրանք ևս պետք է նկատի առնել ժամանակաշրջանի ու միջավայրի պատկերն առավել ամբողջական ընկալելու համար: Տվյալ դեպքում ևս հայերի հաջողությունը և հույների «շնորհագրկումը» զուտ մեծ վեզիրների փոփոխությամբ կամ ազգային-դավանական համակրանքով բացատրելը հույժ թերի կլինի: Խնդիրն այն է, որ հույների հաջողությունը Երուսաղեմում սպառնալիքի տակ կղներ նաև կաթոլիկների սեփականատիրական իրավունքները Սուրբ տեղերում: «Լատինները զգացին իրողությունը և կանխահոգ զգուշությամբ պետք տեսան հայերուն միանալ և հայերուն օգնել, որպեսզի անոնց ճզմվելեն ետքը կարգը իրենց չգա»⁴, – նկատում է Օրմանյանը: Իսկ լատինների հետևում կանգնած էին եվրոպական տերությունները և առաջին հերթին կաթոլիկական Ֆրանսիան: Պատահական չէր, որ Պարթենիոսի նկարագրած դեպքերից անմիջապես հետո հույների հետագա գործողությունները կանխելու նպատակով Գ. Պոլիս գնացած Գրիգոր Շղթայակիրը հանդիպում և բանակցում է Ֆրանսիայի դեսպան Վիլյոմի հետ՝ նշված հարցի առիթով: 1735 թ. մարտին հայ-հունական հանդիպմանը, որին մասնակցում էին հույների պատրիարք Մելի-

² Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Էջմիածին, 2001, էջ 3356:

³ Գ. Բամպուքճյան, Նովիաննես Կոլոտ պատրիարք, Ստանպուլ, 1984, էջ 56:

⁴ Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 3357:

տիրուր և Հովհաննես Կոլոտը՝ կողմերի երևելիների մասնակցությամբ, վճռվեց խաղաղությամբ կարգավորել ինդիքը: Հայերին հանձնվեցին մինչ այդ հույների կողմից խլված սրբատեղիները: Ինքը՝ Պարթենիոսը, ծանր է տանում հույների հարկադրված հրաժարումը Երուսաղեմում ունեցած իրենց հավակնություններից: Հ. Բորթիկյանին հաջողվել է հայերենում պահպանել դիվանագիտական այն նրբամիտ և երկիմաստ դարձվածները, որոնք օգտագործելով, Պարթենիոսը, թվում է, թե հույների պարտությունն արձանագրում է որպես հաղթանակ: Օսմանյան իշխանությունների վճիռն այս մասին նա համարում է հույների «իրավունքները հաստատող վավերագիր» (էջ 157): Իհարկե, իրավունքները, բայց նախկին իրավունքները և ոչ թե 1734-1735-ի հավակնություններն այլոց սեփականության նկատմամբ: Այսուհանդերձ, Պարթենիոսը չի թաքցնում ճշմարտությունը՝ հակիրճ և համառոտ: «Բազում հարցերի շուրջ մեծ աղմուկ բարձրացավ, որի պատճառով որոշեցինք ձեռք քաշել», - գրում է նա (էջ 157): Այսպես ավարտվեցին XVIII դ. 30-ական թվականների կեսերի հույն-հայկական ընդհարումները Ս. Տեղյաց առիթով, որով էլ ավարտում է իր պատմությունը Պարթենիոսը:

Աշխատությունը թարգմանված է բնագրի ոճին պատշաճող հայերենով. Հ. Բորթիկյանը կարողացել է ժամանակի ոգին արտահայտել համարժեք լեզվամտածողությամբ: Կցված հմտալի առաջաբանը և ծանոթագրությունները թարգմանությունն օժտել են բնագրի նշանակալիությունը ընթերցողին հասցնող և նրան մատչելի դարձնող անհրաժեշտ տեղեկություններով ու բացատրություններով: Դրանք արված են գիտական բարեխղճությամբ՝ ի հայտ

բերելով թարգմանչի բժախնդրությունը, որ առկա է ամբողջ տեքստում: Այսուհանդերձ, կարծում ենք, որ որոշ բառեր կարելի էր ոչ թե թարգմանել (ինչը, ի դեպ, արվում է արդեն իսկ բնագրում, որտեղ հունարենի են փոխված հատկապես պաշտոնների անունները), այլ հայ ընթերցողին ներկայացնել ընդունված՝ թուրքերեն ձևով: Թարգմանիչն այս կերպ գործածում է հունարենին համարժեք կուսակալ, գերագույն կուսակալ անունները՝ մեծ վեզիրի կամ եպարքոսի փոխարեն, կողմակալ և էկոնոմ անունները՝ բելլերբեյի և դեֆթերդարի փոխարեն: Այնուհետև, բնագրային «Ռևան» տեղանունը, իր իսկ թարգմանչի վերապահումով, ծանոթագրվում է՝ «թերևս Ռևանդուզ» (էջ 162, ծանոթ. 15): Մինչդեռ, «Ռևանը» Երևանն է, որի մասին և վկայում է բնագրային «Պարսկաստանի Ռևանի կառավարիչը» դարձվածը (էջ 11): (1720-ական թվականներին Երևանը գտնվում էր օսմանյան տիրապետության ներքո՝ իբրև վարչական համապատասխան միավոր):

Ամփոփենք: Հ. Բորթիկյանն իրականացրել է կարևոր և մնայուն աշխատանք, հայագիտությանը պարզեցրելով, հիրավի, արժեքավոր մի գործ՝ հույն-հայկական միջնադարի հարաբերությունները բացահայտելու տեսակետից և որին միայն պատմաբանները չէ, որ դիմելու են այսուհետև: Ակնհայտ է, որ պատմության հորվույթը դեռևս չի հաջողել խլացնելու Երուսաղեմում մղվող հին բանավեճի արձագանքները, որի վկայությունն են բոլորովին վերջերս Մուրբ քաղաքում տեղի ունեցած անախորժ միջադեպերը հույն և հայ միաբանությունների միջև՝ կարծեք նաև հիշեցնելու այս աշխատության հայերեն թարգմանության հրատապությունը:

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ